«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում**

Դաստիարակ՝ Գայանե Թադևոսյան

Մանկապարտեզ՝ <<Ավանի մանկապարտեզներ>> ՀՈԱԿ հ.54 մ/մ

2023թ.

Բովանդակություն

1.Ներածություն……..……2

2. Գլուխ 1.Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը…….……....5

3. Գլուխ 2. Հետազոտության ընթացքը……7

4. Եզրակացություն……..……13

5. Գրականության ցանկ….....……14

Ներածություն

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակն է ապահովել երեխայի մտավոր, սոցիալական,հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Այս նպատակին հասնելու ուղիներից է մանկապարտեզում ուսումնառությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելը:

Նախադպրոցական կրթության մեթոդական նորացման կարևոր ուղղություններից է ինտեգրված պարապմունքների անցկացումը մանկապարտեզի մանկավարժական գործընթացում: Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը: Ինտեգրված պարապմունքը ուղղված է որոշակի թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ:

Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ:

Հետազոտության նպատակը

Ինտեգրված պարապմունքների ընթացքում իրականացնել տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորման, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրություն:

Թեման՝ Խոսքի զարգացում և ապլիկացիա, հեքիաթի պատմում <<Պապն ու շաղգամը>> փակցնել <<Շաղգամը հողի վրա>>:

Նպատակը.

Զարգացնել գեղարվեստական ստեղծագործությունը լսելու, գնահատելու, հարցերին պատասխանելու կարողությունը, կապակցված խոսքը, հարստացնել բառապաշարը,

շախկամ, համագործակցել բառերով: Դաստիարակել համագործակցելու ձգտում: Զարգացնել ապլլիկացիոն հմտություններ: Կարողանալ փակցնել նմուշօրինակին համապատասխան, աշխատել կոկիկ և մաքուր:

Վարկած

Մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը կնպաստի պրակտիկ գործունեության կատարելագործմանը, բովանդակային նոր մոտեցմանը, մեթոդների կիրառմանը:

Հետազոտությունն իրականացնում ենք հետևյալ նպատակով՝

Զնավորել և զարգացնել հոգեկան գործնթացներից ուշադրությունը, հիշողությունը, խոսքը, մտածողությունը, ապահովվել միջառարկայական կապերը տարբեր մեթոդիկաներից:

Հետազոտական աշխատանքի ընթացքը և բաժինները

Հետազոտությունը կատարվել է <<Ավանի մանկապարտեզներ>> N54 ՀՈԱԿ Մ. մանկապարտեզում, 2023-ի նոյեմբերի 13-ից մինչև 23-ը: Ինձ համար որպես հետազոտական առանցք ընտրվել է կրտսեր II-րդ տարիքային խմբի 21 երեխա:

ԳԼՈՒԽ.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական ևգեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը: Ինտեգրված պարապմուքնները կարևորում ենգործունեության այն ձևերը որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվողփոփոխությունների ճիշտ ընկալում: Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջև կապերի ստեղծում, այսինքն, որևէ թեմաուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր և երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջև գոյություն ունեցող կապերը: Երեխաների առաջարկվում են հետաքրքրիր թեմաներկենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնականտեղ հատկացնելով ապահովվում է երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ: Խաղի տարրը ինտեգրված դասի անբաժանելի մասն է :

Ինտեգրված դասի հիմնական խնդիրները
երեխաների կողմից շրջապատող աշխարհի պատկերի ամբողջական ընկալման ձգտումը.
նախադպրոցականների մոտ տեղեկատվության ինքնուրույն զարգացման և դրա օգտագործման հմտությունների ձևավորում

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս հաշվի է առնում հետևյալը.

• թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,

• ընտրված թեման նպաստում է երևակայության և ստեղծագործական մտածողության խթանմանը,

• ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը,

• երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխասխանատվությունկրելու,

• երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

<<Ինտեգրված պարապմունքները իրենց բազմազանությամբ և միօրինակությամբ ապահովում են երեխայի ամբողջական պատկերացումներն ու բազմազան կապերը՝ տարբեր օբյեկտների և երևույթների միջև>>:

Լալա Սմբատյան <<Նախաշավիղ>> 2015թ

<<Երեխան ունի տեսնելու, մտածելու, զգալու իր հատուկ ունակությունը: Չկա առավել անմիտ բան, քան նրանց այդ ունակությունը մերով փոխարինելու փորձը>>:

Ժան Ժակ Ռուսո <<Նախաշավիղ 2>> 2016թ

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ստեղծել համապատասխան պայմաններ և մոտիվացնել երեխաներին յուրացնելու գեղարվեստական ստեղծագործությունը ապլիկացիայի պարապմունքի միջոցով:
Հետազոտական աշխատանքի իրականացման համար կիրառել եմ ինտերակտիվ մեթոդներ՝ մտագրոհ, հարցեր, հարցադրումներ, դերային խաղ, զրույց:
Պարապմունքի պլանը.
Անհրաժեշտ նյութեր
«Պապն ու շաղգամը» ռուսական ժողովրդական հեքիաթի նկարազարդումները: Հեքիաթի հերոսների դիմակներ: Սպիտակ ստանդարտ թղթեր, սոսինձներ, գունավոր թղթից կտրատած շաղգամ, նմուշօրինակ:
Պարապմունքի ընթացքը.
Խթանման փուլ.
Զրույցի, հարց ու պատասխանի միջոցով վեր հանել երեխաների պատկերացումները ընկերության, փոխօգնության, համագործակցության մասին: Ստեղծել այնպիսի իրավիճակ, որ իբր երեխաները օգնում են դաստիարակին տեղափոխել մանկական սեղանը, ինչը նա չի կարող միայնակ անել:
Իմաստի ընկալման փուլ.
Ընթերցել հեքիաթը և յուրաքանչյուր իրավիճակը ներկայացնող ամփոփ մտքին զուգահեռ ցուցադրել հեքիաթի այդ դրվագին համապատասխան նկարը:
Քննարկում.
-Ի՞նչ էր ցանել պապը:
-Ինչո՞ւ պապը շաղգամը հողից չկարողացավ հանել:
-Ո՞ւմ օգնության կանչեց պապը:
-Ո՞ւմ օգնության կանչեց տատը:
-Ո՞ւմ օգնության կանչեց թոռնիկը:
-Ո՞ւմ օգնության կանչեց շ-Ո՞ւմ օգնության կանչեց փիսիկը:
-Ովքե՞ր օգնեցին պապին:
-Ինչի՞ մասին է հեքիաթը:
Հեքիաթը լսելուց հետո առաջարկել երեխաներին զբաղեցնել իրենց տեղը սեղանների շուրջ և լսելով դաստիարակի բացատրությունները, փակցնել շաղգամ հողի վրա:
Կշռադատման փուլ.
Ամփոփելով պարապմունքը՝ առաջարկել երեխաներին՝ դաստիարակի անմիջական օգնությամբ, խաղալ դերային խաղ «Պապն ու շաղգամը»:

Դիտարկում

Դաստիարակը մոտիվացիա էր ստեղծում սաների մեջ և խթանում նրանց հետաքրքրությունը:
Պարապմունքի ընթացքում պահպանված էր բոլոր փուլերի սահուն հերթականությունը:
Դաստիարակը ապահովել էր դրական, հուզական միջավայր պարապմունքի ընթացքում:
Երեխաների նախկինում ձեռք բերված գիտելիքները հնարավորություն տվեցին իրագործել իրենց առջև դրված խնդիրները: Իրենց տարիքին համապատասխան երեխաները կարողանում էին մտնել ակտիվ խոսքային հաղորդակցման մեջ:
Ուսուցման այս ձևը մի շարք կապեր է հաստատում առարկաների և երևույթների միջև:
Ինտեգրումն օգնում է թեմայի շուրջ ձեռք բերել ոչ միայն գիտելիքներ, այլ նաև կարողունակություններ:

Տնօրեն՝ Աննա Տիգրանյան

Դիտարկում

Դիտարկում
Ուսուցանվող նյութը համապատասխանում էր ծրագրային պահանջներին:
Դաստիարակը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակին, ինչը իրատեսական էր և հստակ ձևակերպված: Առկա էին անհրաժեշտ դիտակտիվ պարագաներ, համապատասխան միջավայր:
Դաստիարակի խոսքը հասանելի էր երեխաներին, կարողանում էր հետևողականորեն կառավարել խումբը:
Ուսուցանվող նյութը ներկայացնում էր պարզև մատչելի, պարապմունքին ներգրավված էին խմբի բոլոր երեխաները: Պարապմունքի ընթացքում կիրառվեցին ինտերակտիվ մեթոդներ:

Մեթոդիստ՝ Հերմինե Մնացականյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտական աշխատանքի ավարտին եկա այն եզրահանգման , որ մանկապարտեզում ժամանակակից պահանջներին համապատասխան պարապմունքի կազմակերպումը նպաստում է պրակտիկ գործունեության կատարելագործմանը, որոնց օգնում են բովանդակալից մոտեցումը , նոր մեթոդների կիրառումը: Ինտեգրված պարապմունքի ընթացքում տարբեր մեթոդիկաների միջև կապերի բացահայտումը նպաստեց առարկաների և երևույթների ուսումնասիրությանը:

Հետագա աշխատանքների ընթացքում ցանկալի է, որ դաստիարակներն ինտեգրված պարապմունքներն պլանավորելիս և կազմակերպելիս ապահովեն հնարավորինս բարձր մոտիվացիա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2005
2. Ա.Հովհաննիսյան, Ս.Մարության «Պարտեզ» նախադպրոցական կրթական ծրագիր, Երևան 2008
3. В.И.Турченко Дошкольная педагогика Москва 2014
4. Н. Рыжова Развитие речи в детском саду. Конспекты занятий в младшей, средней и старшей группах Москва 2010г.